

դատաստաններուն, ուստի արուեստագէտին ու բանաստեղծին ալ մտածութեան, եւ աւելի՛ մեծ իրաւամբ անոնց, քանի որ անոնք մարդկային աւագորեալին կը պատկանին: Իրաւունք ունինք ուրեմն գիտնալու թէ ինչպիսի անձ է խորհողն Յովի. Սեթեանի մէջ, ինչ են եւ ո՛րքան բանավայել իր մտածութիւնք: Ակներեւ է թէ իր իմացականութեան մէջ ոչինչ աւելի ներկայ ու գործոն է քան իմացումը Կատարեալին, Յաւերժականին, Բացարձակին: Բայց կը թուի ինծի թէ Պերպէրեանի, Տէմիրճի-պաշեանի եւ այլոց պէս եւ գուցէ անոնց ալ ազդեցութեամբ բանապաշտ (rationaliste) մըն է Սեթեան. վերջին դարուն սովորական եզրակացական վիճակ անոնց մէջ որ աւելի կամ նուազ տեղեակ են փիլիսոփայութեան պատմութեան, բայց նոյնքան տեղեակ չեն թէ անիկա պատմութիւնն է ինքնագլուխ յանձնապատասխան մտքին ծիծաղաշարժ խարխափումներուն. իր քերթուածներէն միոյն մէջ, *Ձայնք ի միայնութեան*, բանաստեղծը կը թուի գիտնալ փիլիսոփայութեան դոյզն նշանակութիւնը. բայց իր գրութեանց մեծ մասին մէջ կը մնայ միամիտ դժբախտ *rationaliste*ր որ է: Մինչեւ իսկ իր սիրելի Կոստանդնուպոլիսը թողլով Եգիպտոս երթալէն ի վեր այդ բանապաշտութիւնն հետեւած կը թուի ո՛չ թէ իր գառիվերին՝ այլ գառիվայրին, եւ Սեթեանի ազնուագգի այլ մանկական ու ազդելի հոգւոյն մէջ ալ կը թուի կրկնուած ըլլալ ինչ որ տեղի ունեցած է պատմութեան մէջ, 18րդ դարուն... Թոյլ տուէք ինձ, տիկնայք, թոյլ տուէք ինձ, պարոններ, քիչ մը սոսկալ դէպ ի նիթապաշտութիւն այն վարանոտ էջքին համար զոր կատարել տուած են իրեն թերեւս հայկական աղէտներն ու Եգիպտոսի կեանքը... Արդեօք, կ'ըսէք, լա՛ւ կ'ընէր եթէ չբաժնուեր Վոսփորէն, եւ նոյն իսկ Սկիւտար գար բնակելու... Նոճեա՛ց Սկիւտարը... որուն վրայ խօսելու առթիւ իր մէկ նորավէպին մէջ կ'ըսէ թէ «մենաստանի հրապոյր» մը ունի, թէ «անմոռնչ հանդարտութիւն մը որ կը մրափէ հոն»։ «քաղաքն ես, գի՛ւղն ես. ծովէն հե՛ռու, ծովուն մօ՛տ. երկնքին տա՛կ ես թէ մէ՛ջը»...